

Ո՛վ որ այս քարին վրայ իշ-
նայ, պիտի կոտորաի, եւ
որով վրայ որ ինայ, պիտի
փայտէ զանիկա.
Մատթ. ԻԱ. 44
Յիսուս Քրիստոս նոյնն է
երէկ ու այսօր եւ
յաւիտեանս.
Երբ. ժԳ. 8

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԻՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Այնպէս սորվեցուր մեզի մեր
օրերը համբել, որ սրտի
իմաստութիւնն ստանանք.
Սաղմ. Ղ. 12
Ժամանակը ծախու առէք,
վասնզի օրերս չար են:
Եփես. Ե. 16

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժնեգին տարեկան.—Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Պալքանեան երկիրներ 1 շիւ ուրիշ երկիրներ 1,50 շիւ

Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 11 - 12

Գ. ՏԱՐԻ

15 ԴԵԿՏ. 1927

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԳԱՅԹԱԿԴՈՒԹԻՒՆԸ

Երանի՛ անոր որ իմ վրայովս չգայթակղիր (Մատթ. ԺԱ. 6)

Գ.— ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԳԱՅԹԱԿԴՈՒԹԻՒՆԸ

Աստուածային եւ մարդկային գայթակղու-
թեանց տարբերութիւնը՝ Յիսուսի անոնց հանդէպ
ունեցած վերաբերումէն յստակ կերպով կը տես-
նուի :

Միեւնոյն Տէրը որ իր աշակերտները կը զգու-
շացնէ գայթակղեցնելէ եւ թագաւորութեան որ-
դի ըլլալով հանդերձ պարկեշտ իսրայելացի մը
չգայթակղեցնելու համար սատէրը կը վճարէ
իբր տաճարին տուրք, նոյն Տէրը՝ Մատթ. ԺԲ. 1-10ի
մէջ փարիսեցիներուն եւ դպիրներուն դէմ խիստ
ոճով խօսելէ յետոյ երբ աշակերտներու կողմէ
կիմանայ թէ զանոնք գայթակղեցուցած է (հա-
մար 12), տուած գայթակղութեան մասին երբեք
ցաւ չյայտներ եւ աւելի խստօրէն կը գոչէ.
«Ամէն տունկ, զոր իմ երկնաւոր Հայրս չստնկեր
պիտի խլուի (համար 13-14) : Նոյն դիրքը կը
տեսնենք ցովթ. 2. զլսուն մէջ : Յիսուս կ'ըսէ. «Ես
եմ կենաց հացը . . . Ես եմ կենդանի հացը . . .
որ երկիրքէն իշայ, ով որ իմ մարմինս ուտէ ու
իմ արիւնս իմէ յաւիտեանական կեանք կ'ունե-
նայ . . . » : Իսկ երբ աշակերտները 61րդ համա-
րին մէջ կը գայթակղին, Տէրը առանց իր ոճը փո-
խելու աւելի ծանր յայտնութիւն մը կ'ընէ անոնց
62-63րդ համարներով, որ աւելի գայթակղեցու-
ցիչ է ու ատոր ալ կը յաւելու «Հոգին է կեն-
դանի ընողը, մարմինը շահ մը չընէր (համար 64) :
Տէրոջը խորհուրդը այն է թէ գայթակղութիւն-
ները պիտի տեսնեն մէկու մը մէջ, որքան ատեն

որ Աստուծոյ խօսքը ասպառաժուտ սրտի մէջ
կ'իյնայ եւ խորունկ արմատ չկրնար կապել
(Մատթ. ԺԳ. 21) :

Մատթ. ԻԳ. զլսուն մէջ աշխարհի ասպագայի
մասին իր բանախօսութիւնով կը նախատեսէ
որ հաւատացեալները իր անուանը համար շատ
ներդուծին պիտի կրեն ու շատերը պիտի գայ-
թակղին ու զիրար մատնեն, շատերուն սէրը
պիտի պաղի (համար 9-14), զայս կը խօսի իրեն
աշակերտներուն, որոնք տակաւին տկար են,
վասնզի եւ ոչ մէկ պարագայի տակ չուզեր զա-
նոնք ցնորական խորհուրդներով օրօրել : Մատ-
նութենէն առաջ կը նախաձայնէ թէ բոլոր աշա-
կերտները իր վրայով պիտի գայթակղին (Մատթ.
ԻԶ. 31, Ղուկ. ԻԲ. 31) : Պետրոս կը հակառակի
այդ գաղափարին ցոյց տալով թէ ինք զօրաւոր
է եւ չիյնար : Իսկ Յիսուս փոխանակ զանիկա
փայփայելու եւ աւելի մեղմ ոճ մը գործածելու
կը յարէ. «Այս գիշեր դեռ հաւը չխօսած երեք
անգամ զիս պիտի ուրանաս» : (Մատթ. ԻԶ. 34) :

Այսու ամենայնիւ մեր Տէրը այս պարագա-
ներու մէջ բնաւ անտարբեր չգտնուիր, հասկա
Պետրոսի համար կը միջնորդէ. (Ղուկ. ԻԲ. 32) :
Նոյն իսկ ցովթանէս Մկրտիչին ալ զօրացուցիչ
եւ հաստատող դեղահատ մը կը ղրկէ «Երանի՛
անոր որ իմ վրայովս չգայթակղիր» : Որքա՛ն
ցաւալի է որ Աստուծոյ օծեալին առաջնորդը եւ
կարապետը եղողն ալ փորձուի իր մասին
թերահաւատելու ու գայթակղելու, սակայն
ինքը փոխանակ այդ՝ կամ ո՛չ պատասխանելու

իրեն ղրկուածներուն հարցումին, կ'ուզէ որ անոնք պատմեն Յովհաննէսին իրենց տեսածն ու լսածը, որոնք զայն հաւատքի վստահութեան պիտի առաջնորդէին, եւ կը յաւելուէ՝ «Երանի՛ անոր որ իմ վրայովս չգայթակղիր»:

Աստուածային այս գայթակղութեան առջեւ գտնուող Յովհաննէս Մկրտիչին համար Յիսուս ատկէ աւելի բան չկրնար ընել, Թէեւ իր սիրոյ լեցունութիւնը կը յայտնէ այդ խօսքով: Աստուածային գայթակղութեան մէջ Նա իր ամենակաւրելին կ'ընէ, որպէսզի օգնէ Յովհաննէսին, բայց եւ այնպէս չափաւորեալ սահմանի մը մէջ, որ կը հասնի մինչեւ մարդուն կամքին սահմանին: Եթէ Յովհաննէս Մկրտիչ ուզէ — կամք ընէ — կրնայ այդ գայթակղութենէն չվնասուի ընդհակառակն օրհնուի:

Յիսուս Յովհ. Ժ. 1 ի մէջ կը պարզէ կանխաւ Թէ աշխարհի կողմէ ապագային գալիք ատելութիւններն եւ նեղութիւնները մէկ նպատակի համար են. «որպէսզի չգայթակղիք»:

Յիսուսի այս յայտնութիւնը զանոնք գայթակղութեանց հանդէպ նախապատրաստելու եւ նոր զենքերով զինելու պիտի ծառայէր: Մեսիայական այս պատուէրները միայն աշակերտներուն համար չէր: Տէրը ինք անծամբ իր վրայ կը գործնականացնէ: Բնաւ չգայթակղի իր Հօրը կարգադրութեանց առջեւ, որքան ալ խոնարհեցնէին զինքը, մինչեւ Գեթսեմանի, մինչեւ Գողգոթա, ուր Նա աշխարհի տեսարան պիտի ըլլար: Դիտէր Թէ իւրաքանչիւր նոր վայրկեան աւելի ծանր հարուած պիտի իջեցնէր իր գլխուն սակայն կը հաճերէր, կը հնազանդէր, եւ անընդհատ կը յաղթէր:

Դիտնալով միանգամայն Թէ Հօրը կողմէ իր առջեւ դրուած ճամբան աշակերտներն ալ պիտի գայթակղեցնէր, այսուհանդերձ անկէ չի հրաժարիր, վասնզի աստուածային գայթակղութիւնը անհրաժեշտութիւն մըն է:

Խաչին վրայ կը տեսնենք աստուածային գայթակղութիւնը իր գագաթնակէտին հասած, ուր գայթակղութեան կ'ենթարկուի իսրայէլի ժողովուրդին կրօնական գիտակցութիւնը:

Մինչ Մեսիան անէծքի խաչէն կախուած էր, անկէ անցնողներ գլուխին իրերցնելով կ'ըսէին. «Դուն որ տաճարը կը քակէիր եւ երեք օրուան մէջ կը շինէիր, ինքզինքդ ազատէ, եթէ Աստուծոյ որդին ես, իջիր այդ խաչէն»:

Ժողովուրդին առաջնորդները կ'արհամարհէին զԱյն ըսելով. «ուրիշները ազատեց ինքզինքը չը կրնար ազատիլ, եթէ իսրայէլի թագաւոր է, Թող հիմա իջնէ խաչէն եւ իրեն հաւատարմէ: Աստուծոյ յուսացե՛ր է, հիմա Թող փրկէ աստիկ վասնզի ըսաւ Թէ ես Որդի Աստուծոյ եմ» (Մատթ. Ի. 42-43): Այսպէս խաչեալ Քրիստոսը հրէանէ.

րուն գայթակղութիւն եղաւ: Սողոս ալ գայթակղած էր անոր մասին այն աստիճան որ եկեղեցին ալ կը հալածէր, բայց այն օրը երբ Քրիստոս հանդիպեցաւ իրեն, խաչը Աստուծոյ զօրութիւնը եղաւ, որով «տկարութիւնը» մարդոց զօրութենէն աւելի զօրաւոր է:

Սոյն Սողոսը իբր Պօղոս մը, իր նախկին եւր գայթակղեցնող խաչին ճամբան բռնեց եւ անծնական փորձառութեամբն իսկ հաստատած ըլլալով հանդերձ Թէ խաչին քարոզութիւնը բոլոր հրէաներուն գայթակղութիւն պիտի ըլլար, ոչ մէկ վայրկեան հրաժարեցաւ անկէ: Ան որ ամենուն հետ ամէն բան ըլլալ կ'ուզէր մի քանի հոգիներ ապրեցնելու համար, այդ աւետարանին ոճը չէր փոխեր հրէաներուն հետ հրէայի պէս ըլլալու նպատակաւ, ընդհակառակն կորնթաց. Լոց գրելու ժամանակ խաչեալ Քրիստոսէն ուրիշ ոեւէ բան մը չէր գիտէր: Դիտէր Թէ այս քարոզութիւնը արտաքինապէս իր անձին եւ հրէաներուն վրայ շատ ողբերգական արդիւնքներ պիտի ունենար եւ սակայն գիտէր ալ Թէ խաչին գայթակղութիւնը անխափան էր (Գաղ. Ի. 11), ուստի խաչին քարոզութեան խորին նուիրումով կը հետեւէր արդիւնքը Տէրոջմէ սպասելով:

Արդ ո՛ր է Աստուածային գայթակղութեան գաղտնիքը կամ ինչի՞ մէջ կը կայանայ Անոր գայթակղեցուցիչ նկարագիրը:

Հին Կտակարանի կարգ մը բարեպաշտները դիւրութեամբ չէին կրնար տեսնել Թէ չարերը յաջողութիւն կ'ունենան եւ կը հարստանան, անոնք այս անարդար յաջողութիւնները Աստուծոյ կը վերագրէին եւ դիւրաւ կը սահէին (կարդա՛ Սաղմ. ՀԴ.): Մարդկային տեսակէտով ըմբռնելի եւ բոլորովին իրաւացի է, որ անիրաւ անմիջապէս պատժուի, չարը միշտ ծախողի: Դա լող Մեսիան՝ հրէական բարեպաշտական ըմբռնումով անմիջապէս դատաստանի ամոռին վրայ նստելով պէտք էր դատէր ամէն ամբարտաւան եւ ամբարիշտ, բայց Քրիստոս ասոր հակառակը ապացուցուց — խոնարհութեան հոգին: Մաքսաւորները սիրեց ու մեղաւորներուն հետ կեցաւ: Մեսիա մը, որուն ընտանիքը, եղբայրներն ու քոյրերը անգամ յայտնի էին եւ ո՛րքան ալ աննշան ծագումով: Աննշան գործակիցներու ընտրութիւնը, անոնց հետ գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք քալելով անցնիլը, յաճախ դաշտերու մէջ գիշերելը, աղուէսներէն եւ երկնից թռչուններէն աւելի պակաս՝ նոյնիսկ գլուխը քարի վրայ դնելու տեղ մը չունենալը, ապուակ մըն էր իր միջոցաւ կրօնական հեղինակութիւն կորզելու ջերմէն բռնուող եւ իբր կրօնական պետութիւն մը աշխարհի տիրել ուզող հրէային ճնշումին:

Մարդկային բնական զգացումները ակամայ կը գայթակղին աստուածային գայթակղու-

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԱՍԵՐ 1928 ՏԱՐԻՈՅ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Աղօթք ընթերցումէ առաջ. «Բաց իմ աչքերս, որպէս զի բռն օրէնքէդ հրաւճենք իմ սեղանս:» Սաղ. ձգթ. 18:

ՅՈՒՆԵԹԱՐ	ՓԵՏՐՈՒԱՐ	ՄԱՐՏ	ԱՊՐԷԼ	ՄԱՅԻՍ	ՅՈՒՆԻՍ	ՅՈՒԼԻՍ	ՕԳՈՍՏՈՍ	ՍԵՊՏԵՄԲԵՐ	ՀՈԿՏԵՄԲԵՐ	ՆՈՅԵՄԲԵՐ	ԴԵԿՏԵՄԲԵՐ
Սաղմոս	Բ Թաղաւորաց	Յովնանէս	Յովնանէս	Գ. Թաղաւորաց	Ա. Կորնթացիս	Երեմիա	Մատթիոս	Իսայի	Դ. Թաղաւորաց	Բ. Կորնթացիս	Տիմոթէ
14 ԻԷ. 1-14	1 ԺԹ. 16-30	1 Զ. 41-59	14 ԺԷ. 13-26	1 ԺԳ. 23-34	1 Թ. 1-14	14 ԼԶ. 1-10	1 ԺԳ. 31-43	1 ԻԶ. 1-16	1 ԺԱ. 11-21	1 Ժ. 1-18	1 Ա. 1-16
2 ԻԶ. 1-12	2 ԺԹ. 31-43	2 Զ. 60-71	2 ԺԸ. 1-14	2 ԺԶ. 23-31	2 Թ. 15-27	2 ԼԶ. 16-28	2 ԺԳ. 44-58	24 ԻԶ. 17-30	2 ԺԲ. 1-15	2 ԺԱ. 1-15	24 Բ. 1-15
3 ԻԸ. 1-9	3 ԻԲ. 1-16	3 Է. 1-18	3 ԺԸ. 15-27	3 ԺԷ. 1-16	3 ԺԸ. 1-13	3 ԼԸ. 1-13	3 ԺԳ. 1-12	3 ԻԶ. 31-46	3 ԺԳ. 14-25	3 ԺԱ. 16-33	3 Գ. 1-15
4 ԻԹ. 1-11	4 ԻԲ. 17-32		4 ԺԸ. 28-40	4 ԺԷ. 17-24	4 ԺԸ. 14-28	4 ԼԸ. 14-28	4 ԺԳ. 13-21	4 ԻԶ. 47-58	4 ԺԳ. 1-14	4 ԺԳ. 1-15	4 Փիլիմոն
5 Լ. 1-12			5 ԺԹ. 1-16	5 ԺԸ. 1-16	5 ԺԱ. 17-34	5 Բ. 1-12	54 ԺԳ. 22-36	5 ԻԶ. 59-75	5 ԺԷ. 6-19	5 ԺԳ. 1-14	5 Է. 15-25
6 ԼԱ. 1-13		44 Է. 19-36	6 ԺԹ. 17-30	64 ԺԸ. 1-29	6 ԺԲ. 1-11	6 Բ. 13-23	6 ԺԷ. 1-14	6 ԻԷ. 1-14	6 ԺԸ. 20-28	6 Ա. 1-18	6 Ա. 1-16
7 ԼԱ. 14-24	54 ԻԲ. 33-51	5 Է. 37-53	7 ԺԹ. 31-42	7 ԺԸ. 30-46	7 ԺԲ. 12-31	7 Գ. 1-17	7 ԺԷ. 15-28	7 ԻԷ. 15-26	74 ԺԷ. 29-41	7 Բ. 1-13	7 Բ. 1-15
	6 ԻԳ. 1-7	6 Ը. 12-30		8 ԺԹ. 1-8	8 ԺԳ. 1-13		8 ԺԷ. 29-39	8 ԻԷ. 27-44	8 ԺԸ. 1-12	8 Բ. 1-12	8 Գ. 16-27
84 ԼԲ. 1-11	7 ԻԳ. 8-23	7 Ը. 31-47		9 ԺԹ. 9-21	9 ԺԷ. 1-11	84 Գ. 1-11	9 ԺԸ. 1-12	94 ԻԷ. 45-56	9 ԺԸ. 13-25	9 Ը. 1-14	94 Ը. 1-18
9 ԼԳ. 1-11	8 ԻԳ. 1-9	8 Ը. 48-59	84 Ի 1-16	10 Ի. 1-14	104 ԺԷ. 12-28	9 Գ. 12-25	10 ԺԸ. 13-28	10 ԻԸ. 1-10	10 ԺԸ. 28-37	10 Ը. 1-13	10 ԺԱ. 14-25
10 ԼԳ. 12-22	9 ԻԳ. 10-17	9 Թ. 1-12	9 ԻԱ. 1-14	11 Ի. 15-30	11 ԺԷ. 35-49	10 Է. 1-16	11 ԺԷ. 1-13	11 ԻԸ. 11-20	11 ԺԹ. 1-2	11 Ժ. 1-18	11 ԺԸ. 20-32
Ա Թաղաւորաց	10 ԻԳ. 18-20	10 Թ. 11-23	11 ԻԱ. 13-25	12 Ի. 31-48	12 ԺԷ. 50-58	11 Է. 17-26		12 ԻԸ. 1-10	12 ԺԹ. 5-20	12 ԺԱ. 6-10	12 ԺԸ. 1-11
11 Ա. 1-16	Յովնանէս	11 Ժ. 26-41	Գ. Թաղաւորաց	134 ԻԱ. 1-19	13 ԺԸ. 1-12	12 Է. 33-48	124 ԺԷ. 14-27	13 ԻԸ. 11-20	13 ԺԸ. 1-15	13 ԺԸ. 1-8	13 ԼԳ. 12-20
12 Ա. 17-27	11 Ա. 1-14	12 Ժ. 1-18	12 Ա. 5-21	14 ԻԲ. 1-12	14 ԺԸ. 13-24	13 Է. 1-18	13 ԺԸ. 1-14	14 ԻԸ. 1-10	14 ԻԲ. 1-10	14 ԺԸ. 9-14	14 ԼԳ. 1-10
13 Բ. 1-17		13 Ժ. 19-30	13 Ա. 22-40	15 ԻԲ. 13-28	15 Է. 1-16	14 Է. 19-34	14 ԺԸ. 15-35	15 ԻԸ. 1-12	15 ԻԲ. 1-10	15 ԺԸ. 1-9	15 ԼԳ. 11-19
14 Է. 1-12	124 Ա. 15-28	14 Ժ. 31-42	14 Ա. 41-53	16 Ի. 29-40	16 Է. 17-28	154 Է. 1-14	15 ԺԸ. 13-30	16 ԻԸ. 1-12	16 ԻԲ. 1-9	16 Ա. 1-12	164 ԼԳ. 20-31
154 Զ. 1-12	13 Ը. 29-42	15 ԺԱ. 1-16	154 Գ. 1-13	Սաղմոս	174 Ժ. 1-13	16 Է. 15-29	16 Ի. 1-16	17 ԻԸ. 1-10	17 ԻԳ. 10-20	17 Բ. 1-11	17 ԼԶ. 25-38
16 Է. 1-17	14 Ա. 43-51	16 ԺԱ. 17-31	16 Գ. 20-34	17 ԺԹ. 1-7	18 ԺԷ. 5-14	17 Ը. 1-17	17 Ի. 17-34	18 ԻԸ. 1-10	18 ԻԳ. 21-30	18 Բ. 17-23	18 ԼԷ. 1-14
17 Է. 18-29	15 Բ. 1-12	17 ԺԱ. 32-46	17 Է. 1-18	18 ԺԹ. 1-10	19 ԺԷ. 19-27	18 Ը. 18-34	18 ԻԱ. 1-17	19 Գ. 1-12	19 ԻԳ. 1-16	19 Բ. 1-15	19 ԼԷ. 15-28
18 Թ. 1-13	16 Բ. 13-28		18 Զ. 1-14	19 ԺԹ. 1-10	20 ԺԸ. 1-16	19 Ժ. 1-13		20 Գ. 13-27	20 ԻԷ. 1-12	20 Բ. 1-14	20 Ա. Բովնանէս
19 ԺԲ. 1-10	17 Գ. 1-13	184 ԺԱ. 47-57	19 Ը. 1-13	204 ԺԳ. 1-8	21 ԺԸ. 1-10	20 Ժ. 14-26	194 ԺԱ. 18-32	21 Գ. 1-17	21 ԻԷ. 1-12	21 Ը. 1-10	21 Բ. 1-17
20 ԺԸ. 13-23	18 Դ. 14-24	19 ԺԲ. 20-36	20 Ը. 14-30	21 ԺԹ. 1-11	22 ԼԸ. 1-12	21 Ժ. 27-38	20 ԻԱ. 33-46	22 Գ. 18-30	22 ԻԷ. 1-12	22 Ը. 1-14	22 Բ. 18-29
21 ԺԳ. 37-39	19 ԺԳ. 37-39	21 ԺԲ. 37-50	21 Ը. 44-61	22 ԺԹ. 1-12	23 ԼԸ. 1-13	22 Ժ. 1-15	21 ԻԲ. 1-14	23 Գ. 31-44	23 ԻԷ. 1-12	23 Ը. 1-17	234 Գ. 1-12
22 ԺԳ. 1-11	20 Գ. 25-36	22 ԺԳ. 1-17		23 ԺԹ. 1-13	24 ԼԸ. 1-14	23 Ժ. 16-31	22 ԻԲ. 15-33	24 Գ. 1-14	24 ԻԷ. 1-12	24 Ը. 1-18	24 Գ. 13-24
224 ԺԳ. 12-24	21 Գ. 1-14	23 ԺԳ. 18-30	224 Ժ. 1-9	24 ԺԹ. 1-14	25 ԺԱ. 1-18	24 Ժ. 32-42	23 ԻԲ. 34-46	25 Գ. 1-18	25 ԻԷ. 1-12	25 Ը. 1-19	25 Գ. 1-11
23 ԺԳ. 25-33	22 Գ. 15-30	24 ԺԳ. 31-38	23 Ժ. 1-13	25 ԺԹ. 1-15	26 ԺԱ. 1-17	25 ԺԱ. 16-30	24 ԻԳ. 1-14	26 Գ. 1-18	26 ԻԷ. 1-12	26 Ը. 1-20	26 Գ. 12-21
24 ԺԷ. 1-15	23 Գ. 43-54		24 Ժ. 14-29	26 ԺԹ. 1-16	27 ԺԱ. 1-18	26 ԺԱ. 1-13	25 ԻԳ. 23-39	27 Գ. 1-18	27 ԻԷ. 1-12	27 Ը. 1-21	27 Է. 1-12
25 ԺԷ. 19-31	24 Է. 1-14	254 ԺԳ. 1-14	25 ԺԱ. 1-24	27 ԺԹ. 1-17	28 ԺԱ. 1-19	27 ԺԸ. 1-13	264 ԺԳ. 1-14	28 Գ. 1-18	28 ԻԷ. 1-12	28 Ը. 1-22	28 Է. 13-21
26 ԺԸ. 1-14	25 Է. 15-29	26 ԺԳ. 15-31	26 ԺԱ. 26-40	28 ԺԹ. 1-18	29 ԺԱ. 1-20	28 ԺԸ. 1-14	27 ԻԳ. 13-31	29 Գ. 1-18	29 ԻԷ. 1-12	29 Ը. 1-23	29 Է. 1-13
27 ԺԸ. 1-14		27 ԺԷ. 1-17	27 ԺԸ. 1-15	29 ԺԹ. 1-19	30 ԺԱ. 1-21	29 ԺԸ. 1-15	28 ԻԳ. 32-51	30 Գ. 1-18	30 ԻԷ. 1-12	30 Ը. 1-24	304 Գ. 1-14
28 ԺԸ. 15-24	264 Է. 30-47	28 ԺԷ. 18-27	28 ԺԸ. 16-30	30 ԺԹ. 1-20	31 ԺԱ. 1-22	30 ԺԸ. 1-16	29 ԻԳ. 1-17	31 Գ. 1-18	31 ԻԷ. 1-12	31 Ը. 1-25	31 Է. 1-22
294 ԺԸ. 1-18	27 Զ. 1-14	29 ԺԸ. 1-15	294 ԺԳ. 1-10	31 ԺԹ. 1-21		31 ԺԸ. 1-17	30 ԻԷ. 14-30	304 ԺԱ. 1-10	31 Բ. 1-15	31 Ը. 1-26	
30 ԺԸ. 19-33	28 Զ. 15-27	30 ԺԸ. 1-12	30 ԺԳ. 11-22								
31 ԺԹ. 1-15	29 Զ. 28-40										

Սբ. Գրոց Միութեան անդամներն ամէն օր կը կարդան Սբ. Գրոց որոշուած մասը եւ կը հրաւիրուին իրարու համար աղօթել ամէն Կիրակի առաւել:

Ար. Գրոց Միութիւնը կապակցութիւն ունի շատ եկեղեցիներու, Ար. Գրոց ուսանողներու, դպրոցներու եւ գոյէճներու հետ եւ մեծ հրու թէ փոքրերու արդիւնաւոր ստատար մը եղած է Ար. Գիրքը օրէ օր կարգալու եւ խորհրդածութեան աւարկայ ընելու համար:

Ար. Գրոց Միութեան իբր 6,000 ճիւղեր կան Մեծ Բրիտանիոյ մէջ: Եւրոպայի մէջ խոշոր ճիւղեր կան — Ֆրանսա, Իտալիա, Ճանիւսքա, Արանտինալիա, Հոլանտա, Եւն.: Ասիոյ մէջ — Հնդկաստան, Չինաստան, Ճափոն, Գորէա: Աւստրալիոյ մէջ — Նոր Հարաւային Ուէլլս, Վիքթորիա, Թասմանիա, Նոր Զելանտա: Ամերիկայի մէջ — Բանատա, Միացեալ Նահանգներ, Պրազիլ, Արճէնթին, Եւն.: Ափրիկէի մէջ — Հիւսիսային, Հարաւային, Արեւելեան, Արեւմտեան եւ Կեդրոնական Ափրիկէ ու բոլոր Կղզիները:

Ար. Գրոց Միութիւնը կը գործէ անհատներու եւ ազգերու լուսագոյն շահերուն համար: Մեծ Ժառանգութիւն կը մատուցանէ ապագային՝ նորահաս սերունդին դիւրեկալ միտքերուն վրայ տալաւորելով Ար. Գրոց սկզբունքները, որոնցմէ կախեալ է ճշմարիտ յաջողութիւնը:

Ամէն ոք կրնայ անդամակցիլ Ար. Գրոց Միութեան, բայց անոնք միայն մասնակցելու են որոնք իրապէս կը բազման կանոնաւորապէս ու արօթքով կարգալ որոշուած մասերը:

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Մասնաճիւղ

ԱՆԴԱՄԻ ՔԱՐՏ

ԱՆԴԱՄԻ ԱՆՈՒՆԸ

Ընդունուած

Աստղագրուած

Ճիւղին

Պատուակալ

Քարտադար

«Մանկութենէդ ի վեր Սուրբ Գիրքերը զիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Բրիտանո Յիսուսի վրայ եղած հաւատքովը» (Բ Տիմ. Գ. 15.)

Քարտուղար Սուրբ Գրոց Միութեան

J. H. HUBBARD
13a Warwick Lane, London, E. C. 4

1928

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Ար. Գրոց Միութեան, որ 1879ին կազմուեցաւ, նպատակն է զարկ տալ Ար. Գիրքը կանոնաւորապէս ամէն օր կարգալու շարժման:

Որդեգրուած մեթոտն է Ար. Գիրքը ծայրէ ծայր կարգալ հինգ տարուան ընթացքի մը մէջ Ամէն տարի ամբողջովին կը կարգացունեն Աւետարաններուն երկուքը եւ առաքելալներու թուղթերուն երկու երեքը: Որչափ կարելի է, Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի գիրքերը փոփոխակի կը կարգացունեն, Սաղմոսներն ալ մերթ ընդ մերթ, միւս գիրքերուն միջեւ: Աւօրեայ ընթերցումները միջին հաշուով տասնըջորս համար են եւ մասնաւոր կերպով կը յարմարին դեռահասներու եւ գործի մարդոց պէտքերուն:

Ար. Գրոց Միութիւնը Աղօթքի Միութիւն է միանգամայն: Անդամներն ամէն Կիրակի առաւօտ կ'աղօթեն իրարու համար:

Ար. Գրոց Միութիւնը տարածուած է ամէն տեղ եւ ունի 850,000 անդամ: Ար. Գրոց տարեկան ընթերցումներուն ցանկը կը հաստատակուի 50 տարբեր լեզուներով:

Այս Միութեան անդամակցելու համար անհրաժեշտ է ձեր անունը զրկել տեղային քարտուղարի մը, որ ձեզի կու տայ անդամակցութեան քարտ մը աւօրեայ ընթերցումներու ցանկը պարունակող: Այդ քարտերը կը նորոգուին տարուէ տարի:

Թեան բայց զանոնք հաւատքով ընդունիլը հա-
կառակ արդիւնքի մը կը հասցնէ մարդս, անըմ-
բունելի հրաշքի մը — շնորհքին : Երբ այս հրաշքը
տեղի ունենայ, այն ատեն կը սկսի հոգեւոր կեան-
քը, հաւատքի կեանքը, որով կ'եզրակացնենք Թէ
փրկութիւնը կարելի է առանց աստուա-
ծային գայթակղութեան :

Արդ որքա՛ն անհրաժեշտ է աստուածային
գայթակղութիւնը. — Անիկա Աստուծոյ կողմէն
մարդոց փրկութեան համար ստեղծուած ամենա-
յարմար միջոցն է : Աշխարհը այնքան սիրող
Հայրը, որ իր Միածին որդին տուաւ, մարդկու-
թիւնը փրկելու համար, այս կերպէն՝ տարբեր
միջոց մը եթէ ունենար անշուշտ պիտի գործա-
ծէր :

Աստուածային գայթակղութիւնը, մարդս վճռական
վայրկեաններու առջեւ կը կեցնէ, ուր նա անձնական
գիտակցութեամբ եւ համոզումով որոշելու է հաւատա՞լ
Թէ ոչ : Ան որ աստուածային ծրագիրներուն կը հաւա-
տայ գայթակղելէ զերծ կը մնայ : Ան որ չկրնար հաւա-
տալ կը գայթի, կ'իյնայ : Ուստի աստուածային գայթակ-
ղութենէն երկու գորութիւններ կը բոլորին՝ փրկարար
եւ կործանարար. (Ղուկ. Բ. 34, Բ. Կորնթ. Բ. 15-16) :

Քրիստոս ոմանք համար գայթակղութեան քար է,
որու վրայ իյնալով կը կոտորին, իսկ ուրիշներու համար
ալ հաւատքի կենդանի վէմ մը (Ա. Պետ. Բ. 1-8) :

Անոր առջեւ ոմանք կ'ապստամբին, ուրիշներ կը
հնազանդին : Այս գայթակղութեան պարագան շատ
բաղդորոշ եւ լուրջ է, բայց ոչ դիպումական : Անիկա
Տիեզերքը ստեղծող ամենակարող Աստուծոյն բարձրա-
գոյն կամքն է : Անիկա անփոփոխ է, Աստուծոյ խո-
րունկ միտքը կը պարունակէ իր մէջ. չկայ ոեւէ արա-
րած որ կրնայ այս գայթակղութեան էութիւնը եւ անոր
նկարագիրը փոխել :

Անիկա մարդկային սրտին մէջ եղած Թագուն խոր-
հորդները անուղղակի կերպով երեւան կը հանէ, վասնզի
հոն մարդը ընտրելու անհրաժեշտութեան առջեւ կը զբա-
նուի, եւ իր ընտրածը ներքին կեանքին արտայայտու-
թիւնն է : Այսպէս Տշմարտութիւնը ինքնին ի յայտ կու-
գայ, քանզի աստուածային գայթակղութիւնը Տշմարտու-
թիւնն է : Ու Տշմարտութիւնը անպայման ընդունիլ պէտք
է ուր որ ալ գտնուի, ինդիր չէ Թէ մեր ներքին զգա-
ցումներուն հակառակ ալ ըլլայ ան :

Աստուածային գայթակղութեան մէջ ծրարուած է
Տշմարտութիւն եւ սէր իսկ մարդկային գայթակ-
ղութեան մէջ ստուծութիւն եւ ատելութիւն : Այս
երկու ոյժերը միշտ եւ շարունակական հակամարտի մէջ
կը գտնուին, մինչեւ որ ստուծութիւն ու ատելութիւնը վերջ
գտնեն հնծուելով (Մատթ. ԺԳ. 41), այս կերպով Տշմար-
տութիւնը եւ սէրը միայն պիտի տիրեն : Ահա այս է հա-
ւատացեալներու ամենօրեայ ակնկալութիւնը :

«Երանի՛ անոր որ իմ վրայովս չգայթակղիր» :

Աստուածային գայթակղութեան գաղտնիքը եւ անոր
անհրաժեշտութիւնը առայժմ չենք կրնար հասկնալ, անի-
կա մեզի համար շատ մը ուրիշ խնդիրներու նման ան-
հասկնալի պիտի մնայ մինչեւ. կատարելութեան
օրը : Այն ատեն, ինչպէս մարդկային գայթակղութիւնը
պիտի անհետանայ Աստուծոյ բացարձակ իշխանութեամբ,
նոյնպէս ալ աստուածային գայթակղութիւնը պիտի ըն-
կղմի Անոր փառաւորութեան մէջ :

Այս բաներուն ո՛վ բաւական է . . . :

Բայց երբ զՔեզ բաժինս ըրի
Իմ սիրտս ու սէրս Քեզի սուրի
Հաւատացի, տեսայ, կը զգամ
Յգնէ ինձ որ ալ չը կուրնամ :

«Երանի՛ անոր որ իմ վրայովս չգայթակղիր» :

ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ

(Վեր. Ա. 2. Եղոյեան)

Պետրոս առաքեալ կ'ըսէ, թէ «սիրելի եղբայր
Պողոսի . . . ամէն թուղթերուն մէջ» — եւ ան-
շուշտ բոլոր Աստուածաշունչին մէջ — «գծուա-
րիմաց խօսքեր կը գտնուին, զորոնք տղաները
եւ անհաստատները ծուռ կողմը կը դարձնեն . . .
իրենց անձին կորստեան համար» (2. Պետ. 3,
15, 16) :

Աստուծոյ խօսքին մէջ գծուարհասկնալի,
մինչեւ անգամ անհասկնալի բաներ կան : Երե-
սուն տարի մը կ'ընէ որ անձամբ եւ մօտէն կը
քննեմ Սբ. գիրքը, եւ ասանկ բաներու միշտ կը
հանդիպիմ, եւ օրէ օր աւելի : Շատեր ինծի նա-
մակցելով կը հարցնեն իրենց չհասկցածները :
Միայն քանի մը ժամ առաջ պատասխանեցի
մէկուն չորս հարցումներուն : Բայց չկարծուի
որ ես ալ գծուարին խնդիրներ չունիմ, կը խոր-
հիմ թէ ինծի հարցումը զրկողներէն աւելի ունիմ :

Չկայ վարդապետութիւն մը որ լման կրնայ
հասկցուիլ, այնպէս որ հարցում պէտք չըլլայ :
Նախասահմանութիւնը մէկն է միայն : Աս պա-
րագան, աս իրողութիւնը, զօրաւոր ապացոյց
մըն է թէ Քրիստոնէութիւնը միակ Աստուածա-
յին կրօնն է, Սբ. գիրքը միակ Աստուածաշունչն
է, եւ Քրիստոս մի միայն Փրկիչը եւ Տէրը :

Ի՞նչ ընելու է այս գծուարին խնդիրներուն
հանդէպ :

1. — «Տշմարտութեան Հոգիին» առաջնորդու-
թիւն խնդրելու բանը քննելու է Աստուծոյ խօս-
քին մէջ : Դժուարին խնդիրները լուծելու կա-
նոնը շատ անգամ այսպէս կը գտնենք : Մթու-
թեան դռներէն ներս մտնելու համար բանալին
Սուրբ գիրքին մէջ կը գտնենք, եթէ փնտռենք
Հոգիին առաջնորդութեամբ :

2.— Հասկնալէ առաջ Աստուծոյ կամքին հնազանդութիւն պէտք է: Մեր Տէրը կ'ըսէ, «եթէ մէկը կ'ուզէ Աստուծոյ կամքը ընել, պիտի զիտնայ այս վարդապետութեան համար թէ արդեօք Աստուծմէ՞ն է» (Յովհ. 7. 17): Նախասահմանութիւնն ալ այս պայմանով կը հասկնուի, որչափ կարելի է: Ան որ հասկնալէ առաջ՝ Աստուծոյ կամքին հնազանդելու սիրտ չունի, թող չյուսայ ուղիղ հասկնալ ոեւէ վարդապետութիւն: Յաջորդ պոլսին մէջ ալ (8. 34, 32) նոյնպէս կ'ըսէ, «եթէ դուք իմ խօսքիս մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք, եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, եւ այն ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ: Տէր Յիսուսի ճշմարիտ ուսանող ըլլալու, ճշմարտութիւնը գիտնալու, մասնաւոր մեր սորվածով փրկութեան համար, եւ փրկութեան մէջ, օրհնուելու պայմանը նոյնպէս հնազանդ ըլլալն է: Որչափ ատեն որ մէկը Աստուծոյ հետ անհաշտ ըլլալով կը մօտենայ հասկնալու Սբ. գիրքին վարդապետութիւնները, պիտի չյաջողի: Եւ եթէ չափով հասկնայ, տակաւին պիտի չընդունի, եւ ճշմարտութիւնը անօգուտ կը մնայ իրեն փրկութեանը համար: «Շնչաւոր (կամ բնական) մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր, վասնզի անոնք իրեն յիմարութիւն են: Ու չկրնար ալ գիտնալ, վասնզի հոգեւոր կերպով կը քննուին» (Ա. Կորնթ. 2. 14): «Հեզութիւնով ընդունեցէք ձեր մէջ սերմանուած խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել» (Յակոբ 1. 21):

3.— Շատ կարեւոր եւ երբեմն հարկաւոր ալ է մեր դժուարին հարցումները ներկայացնել անոնց՝ որոնք Սբ. Հոգիով հմուտ են Աստուծոյ խօսքին:

4.— Այս ամենէն վերջ պէտք է հոգ տանիլ «զրուածէն աւելի բան մը չխորհիլ» (1 Կորնթ. 4. 6): Շատ մը դժուարութիւններ, հակասութիւններ եւ սխալ մեկնութիւններ այս կանոնին զսփցառութենէն յառաջ կուգան: Անշուշտ «կարելի չէ որ զրուածը աւրուի» (Յովհ. 10. 35), սակայն մենք վնաս կը կրենք եթէ զրուածէն աւելի կամ պակաս մտածենք: Հասկնալու կամ ոչ, խօսքը եղածին պէս ընդունելու ենք, վասնզի անիկա «Աստուծոյ խօսքն» է (1 Թեա. 2. 13), եւ «ծածուկ բաները մեր Տէր Աստուծոյ կը վերաբերին» (2 Օր. 29. 29):

Յոյժ ցաւալի է որ այս էական, փրկարար եւ օգտակար կանոններուն հակառակ տակաւին շատեր չարաչար կը հասկնան Նախասահմանութեան վարդապետութիւնը, եւ զայն «ծուռ կողմը կը դարձնեն... ԻՐԵՆՑ ԱՆՁԻՆ ԿՈՐՍՏԵԱՆԸ ՀԱՄԱՐ: Այսինքն ինչ որ իրենց փրկութեան, քաջալերութեան եւ ապահովութեան համար է, կը հասկնան եւ կը ծառայե-

ցնեն իրենց յաւիտենական կորուստին համար: Արդեօք այսպէ՞ս կ'ընէ ընթերցողը: Անոնք կ'ըսեն «եթէ Աստուած որոշեր է որ ես փրկուիմ, արդէն կը փրկուիմ, ի՞նչ հարկ որ ես բան մը ընեմ ասոր համար» կամ «եթէ Ան առաջուց սահմաններ է իմ կորուստս, արդէն անօգուտ է որ ապաշխարեմ եւ հաւատամ»: Կորստաբե՛ր մտածողութիւն, վասնզի «մենք ի՞նչպէս պիտի ազատինք եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութենէ մը» (Եբր. 2. 3), որ ձրի եւ առատ է «ամէն հաւատացողներուն» (Հռ. 3. 22, 24):

* *

Ուրեմն բոլորովին անհասկնալի՞ է Նախասահմանութեան վարդապետութիւնը, եւ պէտք չէ՞ հարցում ընել կամ ուսանիլ անոր վրայով:

Ես կը վկայեմ որ թէեւ ասիկա դժուարահասկնալի, մինչեւ անգամ անհասկնալի կէտեր ունի, բայց տակաւին մեր միտքը հանդիսանալու չափ լոյս տրուած է Աստուծոյ խօսքին մէջ:

Նախասահմանութիւնը Աստուծոյ յաւիտենական ծրագրին մէջ Անոր մէկ գործն է, որ սակայն առանձին եւ անհաշտ գործ մը չէ, այլ յարակիցներ ունի, նախընթաց եւ յետընթաց: Այս գործերն են.—

1. Կանխագիտութիւն,
2. Ընտրութիւն,
3. Նախասահմանութիւն,
4. Կոչում,
5. Արդարացուցում,
6. Սրբացուցում, եւ
7. Փառաւորում:

Աստուած ի յաւիտենից այս բաներն ըրած լմնացուցած է իր ծրագրին մէջ, ամէն հաւատացեալի համար: Ասոնք չեն փոխուիր, հաստատուն են. փառք Անոր: Աս է մեր վստահութիւնը: Դէպի ետ նայելով վստահ կ'ըլլանք թէ փրկուած ենք, դէպի յառաջ նայելով կը սպասենք մեր փառաւորումին, այսինքն «Իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու, ժառանգակից եւ փառակից» (Հռ. 8. 28-30):

Աստուած առաջուց իր կանխագիտութեամբ, կը ճանչնայ մարդիկը, անոնք որ պիտի հաւատան եւ անոնք որ պիտի չհաւատան (Հռ. 8. 29, 1 Պետ. 1. 2): Այսպէս ճանչնալով, հարկաւ կ'ընտրէ հաւատացողներ (Եփ. 1. 4, 2 Թեա. 2. 12, 1 Պետ. 1. 2): Յետոյ կը սահմանէ (կ'որոշէ եւ կը սահմանէ յաւիտենական կեանքի եւ փառքի համար (Հռ. 8. 29, Եփ. 1. 11): Եւ կը կ'անչէ (Հռ. 4. 6, 8, 28, 30, 1 Կորնթ. 1. 9 Գաղ. 1. 15, 2 Թեա. 2. 12, 2 Տեմ. 1. 9): Ու կ'արդարացնէ զանոնք «Իր արդարութիւնովը որ Յիսուս Քրիստոսի հաւատքէն է» (Հռ. 3. 21, 22, 8. 30): Եւ ամենէն վերջ կը փառաւորէ (Հռ. 8. 30, Կող. 3. 4):

Շատ կարեւոր համար մըն է 2. Թեւ. 2. 12ը «Աստուած առաջուց ձեզ (կամ մեզ) ընտրեց փրկուելու, Հոգին սրբելով ու ճշմարտութեան հաւատքովը»։ Կը տեսնենք որ Աստուծոյ գործն է մեզի զրկել ճշմարտութեան խօսքը (վասնդի «հաւատքը լսելէն է, եւ լսելը Աստուծոյ խօսքէն Հո. 10. 17), եւ սրբել մեզ Հոգիով։ Բայց մեր գործն է ընդունիլ ճշմարտութիւնը հաւատալ։ Նախասահմանութիւնը այս երկու գործերը մէկտեղ ունի. կրնա՞նք խորհիլ թէ Աստուած անխորհրդաբար կամ կամայաբար յաւիտենական կեանքի սահմանած ըլլայ զանոնք որ պիտի հաւատան, եւ յաւիտենական կորուստի զանոնք՝ որ պիտի չհաւատան։ Եւ եթէ հաւատացողները անպատճառ կը հաւատան, անոր համար որ Աստուած գիրենք այսպէս որոշեր է, ուրիմն պիտի չ'ակնկալէի՞նք որ ողորմած եւ արդար Աստուածը՝ ամէնը սահմանէր այսպէս հաւատալու։ 2է՛, նախասահմանութիւնը անխորհուրդ եւ կամայական գործ մը չէ, այլ Աստուծոյ կանխաւ ճանաչողութեամբ հաստատուած շնորհք մ'է։

Հիմա եւ միշտ, ոեւէ մարդ որ կ'ուզէ փրկուիլ, յօժարութիւնով ընդունիլ խօսքին վկայութիւնը Յիսուս Քրիստոսի վրայով, եւ հաւատալ Անոր, թող վստահ ըլլայ որ Աստուած գիրքն անշուշտ որոշեր է փրկութեան համար, եւ ոչ երբեք կորստեան։ Ոչ ոք կը փրկուի որովհետեւ Աստուած սյսպէս որոշեր է, հապա Ան կը սահմանէ մէկը փրկութեան՝ երբ առաջուց կը ճանչնայ թէ պիտի հաւատայ։ Աստուած հակառակը պիտի ընէ՞։ Եւ կարելի՞ է որ առաջուց Աստուծոյ այսպէս ճանչցած մարդը չհաւատայ, եւ վրիպեցնէ զԱյն։ Երկուքն ալ անկարելի։ Ասոր համար գրուած է, թէ «որոնք որ յաւիտենական կեանքի սահմանուած էին՝ հաւատացին» (Գործ. 13. 48) զի Աստուած առաջուց գիտցաւ թէ ասոնք պիտի հաւատային։ Ան յաւիտեան չը մերժեր մէկը որ կ'ուզէ հաւատալ եւ փրկուիլ։ Եւ ոչ ոք կարող է զԱյն յուսաւրէպ կամ յուսախաբ ընել։

Երբեք կարելի չէ գտնել խօսք մը Սուրբ գիրքին մէջ որ ցուցնէ թէ Աստուած զիպուածաբար, անխորհրդաբար կամ կամայաբար սահմաներ է որ շատեր կորսուին եւ քիչեր փրկուին, ինչպէս կը պատահի, (Մատթ. 7. 13-14)։ Պատահած այս յոյժ ցաւալի բանը Աստուծոյ որոշումէն չէ, այլ մարդոց ազատական ընտրողութենէն։ Ան որ կ'ըսէ — «միթէ ես բնաւ ամբարիշտին մեռնիլը կ'ուզեմ... չէ՞ որ ես կ'ուզեմ որ ան իր ճամբայէն դառնայ եւ ապրի» — Եզեկ. 18, 23, 31, 32, եւ թէ «զարցէ՛ք, դարձէ՛ք ձեր չար ճամբաներէն, վասնդի ինչո՞ւ մեռնիք» — 33. 11, ի՞նչպէս կրնայ հաւատարիմ մնալ Իր նկարագրին՝ յաւիտեան զոցելով փրկութեան

ճամբան անոր դէմ որ Իր խօսքին անսալով կ'ուզէ դառնալ «իր չար ճամբաներէն»։ Ան «որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փրկուին» — 1 Տիմ. 2. 4, եւ թէ «չուզեր որ մէկը կորսուի, հապա որ ամէնքը ապաշխարանքի գան» (2. Պետ. 3. 9. կարելի՞ է որ այս ամէնէն մէկն իսկ սահմանէ կորստեան։ Ամենեւի՞ն։ Ան գիտէ թէ ամէնը կրնան հաւատալ եւ փրկուիլ, եթէ միայն ուզեն, եւ աս պատճառաւ «ամենուն համար» փրկութիւն պատրաստեց, ձրի եւ առատ, «որ ամէն ով որ (չէ թէ միայն սահմանուածները, հապա ամէն ով որ) հաւատայ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ» — Յովհ. 3. 14-18։ Յիւրաքի Յովհ. 3. 16 համարը Աստուծոյ վրայով ըսուած ամենէն աղէկ խօսքը չէ՞։

Բայց ի՞նչ խորհինք Անոր վրայով որ մինչ մի կողմանէ «անանկ սիրեց աշխարհը (բոլոր մարդիկը) մինչեւ Իր Միածին Որդին տուաւ» անոնց փրկութեան համար, միւս կողմանէ նախասահմանութիւնովը շատերը կը զրկէ այդ փրկութենէն։ Ո՛չ, անկարելի է այսպէս հակասական բան մտածել Աստուծոյ վրայով։

Ահա ճշմարիտ իրողութիւնը։ Աստուած ամէնը կը սիրէ ի յաւիտենից, եւ ամէնը փրկելու յօժար եւ կարող է յաւիտեան։ Ան ամէնը պիտի սահմանէր, ամէնը փրկուելու, եթէ այսպէս ճանչնար ամէնը։ Սակայն «ամէնը հնազանդ չեղան Աւետարանին» (Հո. 10. 16։ Յիսուս Քրիստոս եկաւ ամէնը փրկելու, բայց ամէնը չը հաւատացին։ Յովհ. 1. 11. 12։ Ան եկաւ որ մարդիկ «կեանք ունենան»։ Բայց ըսաւ ներկաներուն, «ԴՈՒՔ ԶԻՔ ՈՒԶԵՐ Ինծի գալ որ կեանք ունենաք» (Յ. 40)։ «Ո՛վ Երուսաղէմ, Երուսաղէմ... քանի՞ անգամ քու տղաքներդ ժողովել ուզեցի... եւ ԴՈՒՔ ԶՈՒԶԵՐԻՔ» (Լուկ. 13. 34)։

Ահա թէ ինչու մարդիկ չեն փրկուիր, եւ կը կորսուին։ 2է թէ որ Աստուած այսպէս նախասահմաներ է, հապա որ իրենք չեն ուզեր։ Նախասահմանութիւնը Աստուծոյ կանխագիտութեան վրայ ձեւուած է, եւ կանխագիտութիւնը մարդու մը ազատ կամքը չըռնաբարեր։ Յիւրաքի Աստուած շարժառիթներ կուտայ մարդուն, եւ զօրաւոր միջոցներ ալ կը գործածէ զԱյն հաւատքի առաջնորդելու համար, բայց տակաւին մարդը կարող է ընդունիլ կամ մերժել։ Եթէ մէկը կը կորսուի, ասիկա բոլորովին իրմէն է, իր յանցանքն է։

Մինչ այս տողերը կը գրեմ, գիտեմ որ այս նիւթը կը պարունակէ անհասկնալի կէտեր, բայց ասոնք հասկնալը մէկուն առաւել դիւրութիւն պիտի չընծայէ փրկութեան համար, եթէ արդէն յօժար է հաւատալու։ Ինչ որ ըսուեցաւ մինչեւ հոս, ես կը հաւատամ թէ ճշմարտութիւն է։ Աստուծոյ Նախասահմանութիւնը եւ մարդուն

ազատ կամքը իրարու հետ հաշտեցնելու ճամբան մէկուն առջեւ չի բանար փրկութեան ճամբան՝ որ արդէն բացուած է (Եբր. 10. 19)։ Ու նաեւ մէկը ինքն իրեն համար կարող է հաշտեցնել ըստ երեւոյթին անհաշտ երեւցած այս երկու ճամբարաւթիւնները խոնարհ ապաշխարութիւնով առ Աստուած, եւ անկեղծ հաւատքով առ Քրիստոս։

«Ճամբարիտ ճամբարիտ կ'ըսեմ ձեզի, ամէն ով որ ինծի կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի»։

Բէսէտինա, Գալիթ.

ՔՐԻՍՏՈՍ ԿԵԱՆՔ Է

«Վասնզի եթէ մեր Թշնամի եղած ատենը Աստուծոյ հետ հաշտուեցանք իր Որդւոյն մահովը, որքա՛ն աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապրինք անոր կեանքովը»։

Հռովմ. Ե. 10

Անկեալ, կորսուած, մեղքերու մէջ մեռած մարդը, որ իր ազատ կամքովը ընտրած էր յաւիտենական տանջանքը, որուն համար յուսոյ ոչ մէկ նշոյլ կար, Աստուծոյ նախասահմանութիւնովը ու առատ ողորմութեան շնորհքովը, կը բժշկուի մի միայն խաչին նայելով ու խաչեալին հաւատալով։ Աստուծոյ հետ կը հաշտուի, Անոր որդւոյն Յիսուս Քրիստոսի մահովը ու՝ արիւնովը։ Ասիկա մեղաւոր ու կորսուած մարդկութեան համար Աստուծմէ պարտաւորուած օրհնեալ պատեհութիւն մըն է։ Հռովմ. Ե. 6։

Իր Հայրական սուրբ սիրոյ պտուղն է, որ ամէն հաւատացեալ կը վայելէ։ Ի՛նչ օրհնեալ խոտորմ եւ ի՛նչ սքանչելի սէր կայ սա համարին մէջ։

«Վասնզի Աստուած այնպէս սիրեց ԱՇԽԱՐՀԸ, մինչեւ որ իր միածին որդին տուաւ, որպէսզի Ամէն ով որ Անոր հաւատայ չը կորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ» 3ովզ. Գ. 16։

Մահէն կեանքի փոխուիլը, մեծ օրհնութիւն մըն է, որ Տէրը իր որդւոյն արեանը միջոցաւ մեղի տուած է, շնորհք մըն է եւ ձրի պարգեւ մը։ Եփես. Բ. 8։ Ահա այս ճամբարաւթիւնն է որ կը ցոլայ Հռովմ. Ե. 10 համարին առաջին մասին մէջ, «Աստուծոյ հետ հաշտուեցանք Իր Որդւոյն մահովը» շատ շատեր անոր վկաններն են, շատ շատեր կը հաւատան թէ Յիսուս Քրիստոսի սուրբ արիւնը իրենց անցեալ մեղքերուն թողութիւն եղած է, բայց միայն սա չէ Տէրը շնորհքը, համարին վերջին մասին մէջ աւելին կայ, «որչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապրինք անոր կեանքովը, ահա այս ապրիլն է որ կը պահանջուի բոլոր հաւատաց-

եալներէն, Յիսուս Քրիստոսի արիւնով փրկութեան վկաններէն»։

Սաչէն ասդին անցնիլ, Պէտտէկոստէի օրհնութիւնները վայելեւ, ապրող, կենդանի եղող Քրիստոսը մեղի կեանք ընել եւ Անոր մեր մէջը ապրիլը գիտնալ ու վկայիլ, ապրուած կեանքով վկայութիւն տալ, ոչ թէ ես՝ այլ Քրիստոս կենդանի է ըսել, Գաղ. Բ. 20, ասիկա Քրիստոսի մահուան վկաններ ըլլալէն սարքեր է։

Ահա այս է իրական փրկութեան կեանքը։

Ոչ միայն անոր արեամբ մեղքերու թողութիւն ստանալ, այլ Անոր կեանքը մեղի կեանք ընելով, բոլորովին մեղքէ ազատ կեանք մը ապրիլ է. Հռովմ. Ը. 10։

Քրիստոս մեր Տէրը եւ Փրկիչը մեղք չը գործեց եւ չէր կրնար գործել։ Արդ, եթէ մեր եսը մեռած է ու Ան կ'ապրի մեր մէջ նոյն վիճակը պիտի իրականանայ նաեւ այսօր մեղի համար ալ Եբր. ԺԳ. 8։ Յիսուս Քրիստոս կեանք է, այս՝ բայց եսին, աշխարհի ու անոր սկզբունքներուն մեռնողին եւ միայն իրեն կենդանի եղողներուն կեանքն է։

Ա՛հ, շատ շատեր առանց այս ճամբարաւթիւնը հասկնալ ուղեւոր, Յիսուսի կուգան, եւ երբ հոն միայն մահը կը տեսնեն, բայց ապրող Քրիստոսը ճանչնալու չափ առաջ չեն երթար կը յուսաւորուին ու ետ կ'երթան։ Ապրող Քրիստոսը գտիր, եւ ապրէ անոր հետ, վասնզի կեանք ու անմահութիւն, յոյս ու երջանկութիւն, սէր ու երանութիւն է ան, ամէն բանի մէջ ամէն բան է Ան։ Կող. Գ. 11։

Քրիստոս մեր մեղքի հիւանդութիւնները բժշկելով չը բուսականանար հապա մեղի մշտական առողջ կեանք մը պարգեւել կ'ուզէ։ Անոր խաչէն թափուած սուրբ արիւնը մեր մեղքերը քաւեց, իսկ այսօր ապրող Քրիստոսն է որ մեղի մեղքէ ազատ կեանք մը կը պարգեւէ, «Աստուած մեղի յաւիտենական կեանք տուաւ, ու այս կեանքը անոր որդւոյն մէջ է. Ա. Յովզ. Ե. 11։

«Գրեմք որ այն ամէնը որ Աստուծմէ ծնած է մեղք չը գործեր հապա ան որ Աստուծմէ ծնած է՝ իր անձը կը պահէ, ու չարը իրեն չըպչիր»։ Ա. Յովզ. Ե. 18։

Քրիստոս ոչ միայն ամէն օր մեր յանցանքներով եւ տկարութիւններով աղտոտած արդարութեան զգեստին կը մաքրէ, հապա կ'ուզէ որ մենք միշտ կեանքի նորոգութեանը մէջ պատինք Իրմով։ Հռովմ. Զ. 4։

Ան ըսաւ. ես եմ կեանքը 3ովզ. ԺԱ. 25, ԺԴ. 6. առաքեալը կ'ըսէ, «Քրիստոս մեր կեանքը» Կող. Գ. 4։

Ի՛նչ օրհնեալ առանձնաշնորհում է ըսել, Քրիստոս իմ կեանքն է։

Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ



ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ՄԲ. ԳԻՐԲԸ ԱՄԵՆԱՕԴՏԱԿԱՐ ԿԵՐՊՈՎ
ՍԵՐՏԵՂՈՒ

Բ. Է. ԹՈՐՐԻ

(Շար. 10րդ թիւէն)

4. ԲՈՒՈՐԱՆՈՒԵՐ ԿԱՄՔ ՄԸ ԱՌԱՍՏՈՒԱՅ.—
Յիսուս կ'ըսէ «եթէ մէկը ուզէ Անոր կամը ընել պիտի գիտնայ այս վարդապետութեան համար թէ...» (Յով. Է. 17) : Բոլորանուէր կամք մը յստակ տեսութիւն կը պարգեւէ հոգեւոր հայեցողութեան, որ խիստ հարկաւոր է Աստուծոյ գիրքը հասկնալու համար : Սբ. գրոց հանդէպ շատ մը դժուարութիւններ եւ մեծութիւններ յառաջ կուգան սա իրողութեամբ՝ որովհետեւ ուսանողը գրքին հեղինակին բոլորովին յանձնուած չէ : Ակներեւ է թէ որքա՛ն յստակ, պարզ ու գեղեցիկ տողեր ի յայտ կուգան երբ մենք կը համինք այն կէտին՝ երբ կ'ըսենք Աստուծոյ «ես իմ կամքս բոլորովին Քեզի կը յանձնեմ, ալ ես Քուկդ եմ, սորվեցուր ինծի Քու կամքդ» :

Բոլորանուէր կամք մը Սուրբ գիրքը աւելի կը սարգէ մեզի քան բարձրագոյն համալսարանական ուսուցումը :

Պարզապէս անկարելի է ամենամեծ օգուտներ քաղել Սուրբ գրքէն երբ կամը հիմնովին յանձնուած չէ Աստուծոյ : Շատ վճռական ըլլալու ենք այս մասին : Կան շատեր որ կ'ըսեն «Յ, այո՛» եւ գիտեմ իմ կամքս յանձնուած է Աստուծոյ» մինչդեռ տակաւին չէ : Այսպիսիներ ընտ. առանձնացած չեն Աստուծոյ հետ եւ հին ըսած չեն գիտակցօրէն եւ վճռական. «Ով Աստուած ահա՛ հիմա ինքզինքս Քեզի կը յանձնեմ որ Գուն հրամայես ինծի, շուկեա, առաջնորդես եւ զրկես զիս, եւ Քու հաճութեանդ համաձայն կամիս ինծի» :

Այսպիսի կամաւոր ձեռնարկ մը Աստուծոյ խօսքին գանձարանը բանալու հիմնալի բանալի մը կ'ըլլայ ու այսպէս Սուրբ գիրքը բոլորովին նոր գիրք մը կ'ըլլայ :

5. Հինգերորդ պայմանը շատ նման է չորրորդին : Սուրբ գրոց ուսանողը եթէ կ'ոզէ ամենամեծ օգուտը քաղել իր ուսումնասիրութենէն, անհրաժեշտ է անմիջապէս իր հնազանդութիւնն անոր վարդապետութեանց, այսինքն իր տեսածին պէս կամ յայտնուած պարագային :

Յակոբոս առաքեալ շատ լաւ խրատ մըն է տուած թէ նախկին քրիստոնեաներուն եւ թէ մեզի՝ ժողովրդի կատարողներ եղէք եւ ոչ թէ լսողներ ինքզինքնիդ խաբելով : Շատեր կան որ իրենք զիրենք Սուրբ գրոց ուսանող կը կարծեն, սակայն այս կէտին մէջ ինքզինքնին կը խաբեն : Բացորոշ կը տեսնեն Սուրբ գրքին սորվեցուցածը բայց չեն կատարեր, ասոր համար շատ շուտով կը կորսնցնեն իրենց կարողութիւնը : Ճշմարտութեան հնազանդութիւնը նոր ճշմարտութեանց կ'առաջնորդէ, իսկ անհնազանդութիւնը տգիտութեան եւ աւերածի պատճառ կը դառնայ եւ

կ'ոջնացնէ ճշմարտութիւնը ճանջնալու ձիրքերը : Ոչ միայն լիովին յանձնուիլ պէտք է այլեւ գործնականօրէն հնազանդութիւն բոլոր ճշմարտութեանց որ ի յայտ կուգան : Այս խօսքը ճշմարիտ է. «Բանալի ով որ ունի անոր պիտի տրուի ու աւելնայ եւ ով որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի» : Այս իրողութիւնը առաջին եւ երկրորդ պարագայով ալ անդրդուելի է, որը արդիւնք է Աստուծոյ խօսքին ընդունուելէն կամ մերժուելէն : Գործածէ՛ ու պիտի ստանաս աւելին, մերժէ՛, ու բոլորը պիտի կորսնցնես :

Սուրբ գիրքը միայն հետաքրքրութեան եւ զարգանալու շարժառիթներով մի՛ սերտեր այլ սերտէ որ գիտնաս թէ ինչպէս պէտք է ապրիլ ու Աստուծոյ հաճելի ըլլալ :

Քեզի հրամայում ինչ պարտականութիւնն որ գտնես Սուրբ գրքին մէջ անմիջապէս կատարէ՛ : Ինչեւիցէ օրինակելի եւ բարի նկարագիր որ տեսնես շուտով ընդօրինակէ՛ եւ ապրիլ ջանա՛ եւ ինչ սխալներ որ նշմարես Սուրբ գրքի մէջ, յիշուած մարդոց կամ կիներու վրայ, բաղդատութեան դիր ինքզինքդ, քննէ՛ ու տես՝ թէ միեւնոյն սխալը քու կեանքիդ մէջ ալ չկայ, ու եթէ գտնես, առանց յետաձգելու սրբագրէ եւ ետ կիցիր : Յակոբոս առաքեալ Սուրբ գիրքը հայելի կը նմանցնէ (Յակ. Ա. 23-24) : Հայելին գործն է ցուցնել քու վրայ գտնուած բիծերն կամ արատները, որմէ յետոյ կարող կ'ըլլաս սրբելու զանոնք : Ճիշդ այս կերպով գործածէ Սուրբ գիրքը. տեսածդ ճշմարտութեանց հնազանդելու ջանա՛ եւ ահա հանելուկի նման կը լուծուին այն համարները, որոնք մինչեւ այն ատեն հասկցած չէիր, իսկ անհնազանդութիւնով բոլոր ճշմարտութիւնները պիտի փակուին քու աչքերէդ եւ ամէն ինչ մոռ պիտի ըլլայ քեզ համար : Ներկայ սկստիկութեանց եւ անհնազանդութեանց բուն պատճառը ասոր մէջ է : Մարդիկ ճշմարտութիւնը կը տեսնեն, բայց չեն կատարեր, որով իրենց համար կ'անհետանան :

